ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՌ-ԳՀԾՁԲ-18/14

ք. Երևան «13» 04 2018 թ.

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Մ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Զում Գրաֆիքս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս.Չոբանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ինտերնետային կայքի մշակման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3 500 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, տագմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է _15___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<<Հայաստանի Հանրային ռադիոընկերություն >> ՓԲԸ	«Զում Գրաֆիքս» ՍՊԸ
ք.Երևան Ալեք Մանուկյան 5, 0025	Ք.Երևան,Լալայանց 47ա,բն.78
ՀՎՀՀ 01541435	ՀՎՀՀ 02587519
<<Արդշինբանկ>> ՓԲԸ	Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 2470103477780000	h/h 1570017915890100
Գործադիր տնօրեն Մարկ Գրիգորյան	Տնօրեն Ա.Հովանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«13» 04 2018 կնքված
ՀՀՈ-ԳՀԾՁԲ-18/14 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

CPV	Անվանում	Բնութագիր
72211124	ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ	**Նախագծի նկարագիրը** Այս նախագիծը միտված է ստեղծելու Հանրային ռադիընկերության կայքը, որը օգտատերերին հնարավորություն կտա . • Տեսնելու և ներբեռնելու հաղորդացանցը • Դիտելու երեր գնացած հաղորդումների արխիվը • Կարդալու, դիտելու և քննարկելու տեղեկատվությունը • Հետևելու լրատվությանը RSS-ի միջոցով • Տեսնելու հաղորդումների մասին էջը • Տեսնելու անձնակազմի մասին էջը • Կարդալու և լսելու նորությունները Հանրային ռադիընկերության աշխատակազմը հնարավորություն պետք է ունենա • Կառավարել կայքի պարունակությունը վեբ-ինտերֆեյսի միջոցով • ավելացնելու/խմբագրելու/ջնջելու/ տեսանելիությունը նշելու հնարավորություն տեքստային նյութերի համար • ավելացնելու/խմբագրելու/ջնջելու/ տեսանելիությունը նշելու հնարավորություն ծրագրերի բաժնի համար • ավելացնելու/խմբագրելու/ջնջելու/ տեսանելիությունը նշելու հնարավորություն աշխատակազմի բաժնի համար Վերջնական կայքը պետք է լինի. • Պաշտպանված • Որոնողական համակարգերի հետ համատեղելի **Աշխատանքների ընթացքը** Պայմանագիրը իր մեջ ներառում է կայքի մշակման և ներդրման աշխատանքները (վեբ կայք և ԲԿՀ), որը իր մեջ ներառում է. • Նախագծի իրականացման պլանի մշակում, որը պետք է ներառի. ○ Վերջնաժամկետները ○ ծախսերը ○ աշխատանքի կատարման փուլերը ○ աշխատանքի ավարտի ժամանակացույցը ○ հետագա սպասարկման պայմանները ○ օգտագործվող տեխնոլոգիաները ○ կիրառվող ճարտարապետությունը ○ ներքին կառուցվածքի և տեխնոլոգիաների տեխնիկական նկարագիրը • Կայքի կմախքի մշակում և հաստատում • Կայքի գրաֆիկական դիզայնի մշակում և հաստատում արդեն իսկ հաստատված կմախքի հիման վրա • Կայքի HTML կառուցվածքի մշակում և հաստատում նախապես հաստատված գրաֆիկական դիզայնի հիման վրա • Ֆունկցիոնալ պահանջներին համապատասխան ԲԿՀ-ի մշակում և հաստատում

- Հաստատված HTML կառուցվածքի և ֆունկցիոնալ պահանջների հիման վրա վեբ հավելվածի մշակում և հաստատում
- Ինֆորմացիայի միգրացիա հին կայքից
- Վերջնական թեսթավորում և սխալների ուղղում

Մրցույթի մասնակից ընկերությունը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

- Ունենա լայնածավալ պորտֆոլիո
- Ունենա մեծ ծանրաբեռնվածությամբ աշխատող կայքերի ստեղծման փորձ
- Ունենա հեռուստատեսության կամ ռադիոյի կայքերի նախագծման և զարգացման իրագործված նվազագույնը 1 աշխատանք:
- Պետական կազմակերպությունների հետ համագործակցության փորձ
- Առնվազն 3 ծրագիր, որոնք փորձարկվել և անցել են անվտանգության աուդիտ
- Պատրաստ լինի տրամադրելու տեխնիկական աջակցություն ծրագրային միջոցների և հեռախոսի միջոցով
- Ունենա որոնողական համակարգերի օպտիմիզացման գիտելիքներ

Պատվիրատուն՝

- Տրամադրվեն բոլոր անհրաժեշտ տվյալները
- Մշակում է կայքի շահագործման աշխատանքները
- Պատասխանում է ծրագրի կատարման ժամանակ առաջացած հարցերին
- Մասնակցում է թեսթավորմանը
- Տրամադրում է հին կայքի տվյալները
- Կատարողի հետ բոլոր կոմունիկացիաները կատարվելու են գրավոր տարբերակով (թղթային կամ էլ. փոստի միջոցով)

Պահանջներ

Նախագծի բարեհաջող իրականացման համար կատարողից պահանջվում է կատարել հետևյալ տեխնիկական պահանջները.

- Կայքը պետք է աշխատի Linux/UNIX պլատֆորմայի վրա, օգտագործելով PHP ծրագրավորման լեզուն, MySQL որպես տվյալների բազա, վեբ սերվեր՝ Apache, մարքուփ՝ HTML5/CSS3:
- Կայքը պետք է տեղադրվի պատվիրատուի հոսթինգի վրա, որին կատարողը պետք է ունենա մուտքի համապատասխան իրավունք:
- Mobile և Tablet friendly, աշխատի բոլոր տեսակի բրաուզերների հետ:
- ԲԿՀ (CMS) համակարգը պետք է իր մեջ ներառի SEO գործիքակազմ:
- Կայքը լինելու է եռալեզու՝ հայ, անգլ, ռուս:
- Կայքում որոնում:
- Սթրիմը պետք է քեթչ ափ անելու հնարավորություն ունենա: Սթրիմը լինի բրաուզերների հետ համատեղելի:

- Թույլատրվում է օգտագործել անվճար և բաց կոդով երրորդ կողմի ծրագրային ապահովում, նշելով դրանց մասին տեղեկությունը տեխնիկական փաստաթղթերում

SEO գործիքակազմ

Կայքի ԲԿՀ (CMS) համակարգը իր մեջ պետք է ներառի հետևյալ գործիքակազմը՝

- SEO Friendly URL
- Alt image tags <img alt="">
- Page Title
- Meta Descriptions

Աշխատանքների ժամանակացույցը

- Նախագծի իրականացման պլանի մշակում, որը ներառում է
  - Վերջնաժամկետները
  - ծախսերը
  - աշխատանքի ամիսների ժամանակացույցը
  - աշխատանքների հանձնումից հետո հետագա սպասարկման պայմանները՝ 1 տարի երաշխիքային սպասարկում
  - օգտագործվող տեխնոլոգիաները՝ տես վերոնշյալ
  - կիրառվող ճարտարապետությունը՝ տես վերոնշյալ
  - ներքին կառուցվածքի և տեխնոլոգիաների տեխնիկական նկարագիրը
- Կայքի կմախքի առաջարկ (2 կամ ավել տարբերակներ)՝ պայմանագիրը կնքելուց հետո մինչև 10 օրացուցային օրվա ընթացքում
- Կայքի գրաֆիկական դիզայնի ներկայացում (2 կամ ավել տարբերակներ)՝ պայմանագիրը կնքելուց հետո մինչև 10 օրացուցային օրվա ընթացքում
- Կայքի HTML կառուցվածքի մշակում հաստատված դիզայնի հիման վրա
- ԲԿՀ (CMS) հավելվածի մշակում
- Վեբ հավելվածի մշակում
- Վերջնական թեսթավորման արդյունքների հաշվետվության ներկայացում
- Տվյալների միգրացիա հին կայքից նորին
- Օգտագործողի փաստաթղթերի տրամադրում
- Ադմինիստրատորի փաստաթղթերի տրամադրում (ներառյալ երրորդ կողմի ծրագրերի թարմացման ուղեցույց, եթե այդպիսին կօգտագործվի)
- Տեղակայման ուղեցույց

Բովանդակության կառավարման համակարգ (CMS)

Արտոնությունների տրամադրում

Համակարգը պետք է ունենա տարբեր օգտատերերին տարբեր արտոնություններ տրամադրելու հնարավորություն, թույլատրելով համակարգի ղեկավարին՝

- Ստեղծել/խմբագրել/հեռացնել օգտատերերի
- Թույլատրել օգտատերերին ստեղծել/փոփոխել որոշ տիպի տվյալներ
- Ժամանակավոր սահմանափակել օգտատերերի մուտքը համակարգ

Անվտանգություն

Վերջնական արտադրանքը պետք է մշակվի, օգտագործելով OWASP ուղեցույցները (http://www.owasp.org).

Կայքի ֆունկցիոնալ նկարագրությունը

Գլխավոր էջի կառուցվածք

Հեղերում

- Մեր մասին
- Լեզուներ
- Մուտք
- Որոնում

Բոդի

- Բաներ (Slider)
- Օրվա գլխավոր լուրեր (3 լուր)

Ֆուտերում

- Կապ մեզ հետ
- Սոցիալական կայքերի հղումներ

Բաժիններ
Տեղեկատվական բլոկ

- Հայաստանի հանրային ռադիո
  - Հանրային ռադիոյի մասին
    - Ընդհանուր տեղեկություններ, լսարանը, ծրագրերի քանակը, լեզուների և խմբագրությունների քանակը և այլն
    Լուսանկարներ՝ շենքը դրսից, այգին, շենքի ներսը, ստուդիաներ, սարքավորումներ
  - Կառուցվածք
    - Աշխատակազմ
    Աշխատակազմի կառուցվածքի սխեմա (ծառի տեքստ, նկար, պաշտոն, քիչ անելուց բացվում է կենսագրությունը)
    Բաժինների ցանկ՝
    Ղեկավարի անուն, ազգանունը [*հղում դեպի*

Անձնակազմ
Հեռախոսահամար
Էլ. հասցե
- Խմբագրություններ - հոդում դեպի Ծրագրեր և նախագծեր
- Ինչպես լսել
  - Ծածկույթի բարտեզներ ինտերակտիվ քարտեզ pin-երով mouse hover-ի ժամանակ ցույց տա հաճախականությունները...հաճախականությունների զանկը ըստ բաղաքների
- Պատմություն
  - Ժամանակագրություն
    Ուղղահայաց ժամանակացույցով տեղադրված բոլոր կարևոր իրադարձությունների ցանկ.
    Կարճ նկարագրություն
    Արխիվային լուսանկարներ long-grid եթե հնարավոր է:
    Արխիվային ձայնագրություններ (հոդում դեպի արխիվային կայք)
  - Հանրային ռադիոյի պատմությունը
    Արխիվային լուսանկարներ
    Արխիվային ձայնագրություններ
- Դեմքեր
  - Անձնակազմ
    Անուն. ազգանուն
    Լուսանկար
    Պաշտոնը
    Կենսագրություն
    Հեռախոսահամար
    Էլ. հասցե
- Ծրագրեր և նախագծեր
  - Տարբերանշան/ լուսանկար
    Ամփանում
    Նկարագրություն
    Աշխատակազմ
    Ձայնագրությունների (երերի) արխիվ (ըստ ամսաթվի)
    Հեռախոսահամար
    Էլ. հասցե

Էրատոփական բլոկ

- Օրվա լրահոս

- Նորություններ (ըստ բաժինների, թեմաների)
  - Վերնագիր
  - Հակիրճ նկարագրություն
  - Տեքստ
  - Հեղինակ
  - Ամսաթիվ
  - Լուսանկար(ներ)
  - Տեսանյութ(եր)
  - Ձայնագրություն(ներ)

- Ռադիոլուր
  - Ձայնագրություններ՝ ըստ ամսաթվի
- Խմբագրական սյունակներ և հոդվածներ
  - Ըստ լրահոսի բաժինների
    - Խմբագրական հոդվածներ՝ ըստ բաժինների
  - Ըստ հեղինակների
    - Անձնավորված խմբագրական սյունակներ

Ծառայողական բլոկ

- Կապ
  - Հետադարձ կապի ինտերակտիվ ձև
    - Բաժին/ խմբագրությունն ընտրելու հնարավորություն
    - Հեռախոսահամար
    - Էլ. հասցե
    - Ընտրված հասցեով ստացանց նամակ ուղարկելու ձև
- Հայտարարություններ
  - Վերնագիր
    - Նկարագրություն
    - Հավելվածներ
- Ծրագիր
  - Ծրագրի անվանումը
    - Ժամ. սկիզբը
    - Ժամ. ավարտը
    - Հղում դեպի Ծրագրեր և նախագծեր

- Հանրային ռադիոընկերության երաժշտախմբերը
- Օնլայն տեսախցիկ
- Հանրային ռադիոյի 2րդ ծրագիր - Իմ Ռադիո
- Հանրային ռադիոյի 3րդ ծրագիր – ԱԷՄ ռադիո
- Օրվա ծրագիրը ըստ օրերի
- Օնլայն փլեյեր՝ հետ տալու հնարավորությամբ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱԼ դասակարգմանն (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	72211124	Ինտերնետ կայքի մշակում	դրամ	3500000	1	Ք.Երևան Ալեք Մանուկյան 5	Պայմանագիր կնքելու ամսաթվից մինչև 10.հուլիս.2018 թ

*** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել. քան տվյալ տարվա դեկտեմբերի 15 ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Հայաստանի Հանրային ռադիոընկերություն ՓԲԸ
ք.Երևան Ալեք Մանուկյան 5, 0025
ՀՎՀՀ 01541435
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
հ/հ 2470103477780000
Գործադիր տնօրեն Մարկ Գրիգորյան

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«Զում Գրաֆիքս» ՍՊԸ
Ք.Երևան,Լալայանց 47ա,բն 78
ՀՎՀՀ 02587519
Ամերիաբանկ ՓԲԸ
հ/հ 1570017915890100
Տնօրեն Ա.Չորանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«13» 04 2018 կնքված
ՀՀՌ-ԳՀԾՁԲ-18/14 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

ՀՀ դրամ

Ծառայության				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**	
			Գումարը	Ընդամենը
1	72211124	ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ	3 500 000	3 500 000

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Հայաստանի Հանրային ռադիոընկերություն >>
ՓԲԸ
ք.Երևան Ալեք Մանուկյան 5, 0025
ՀՎՀՀ 01541435
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
h/h 2470103477780000
Գործադիր տնօրեն Մարկ Գրիգորյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Զում Գրաֆիքս» ՍՊԸ
Ք.Երևան,Աղայանց 47ա,բն 78
ՀՎՀՀ 02587519
Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 1570017915890100
Տնօրեն Ս.Հովսեփյան

(ստորագրություն)

L.S.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ՀՀՈ-ԳՀՇՁԲ-18/14 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Գնորդ
«Զում Գրաֆիքս» ՍՊԸ	«Հայաստանի Հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
Ք.Երևան,Լալայանց 47ա.բն.78	ք.Երևան Ալեք Մանուկյան 5, 0025
ՀՎՀՀ 02587519	ՀՎՀՀ 01541435
Ամերիաբանկ ՓԲԸ	«Արդշինբանկ» ՓԲԸ
h/h 1570017915890100	h/h 2470103477780000
Տնօրեն՝ Ա.Չոբանյան	Գործադիր տնօրեն Մարկ Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

§ /§ / 20 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « ____» « _____ » 20 թ.
Պայմանագրի հասարը՝ _____
Գնորդի՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « ____» « _____ » 20 թ. կազմված գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների							
անվանումը	տեխնիկական բնութագրի համարը շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
		ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ՀՀՈ-ԳՀԾՁԲ-18/14 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ _____-ին կնքված N _____
պայմանագրի ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

___ Մհեր Մարգարյան ___
ստորագրություն